CALIFORNIA High-Speed Rail Authority

ՀԱՆՐԱՅԻՆ ; ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ՏՐԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ/ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԻ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղի– Burbank-ից Los Angeles նախագծային հատված

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ/ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու իշխանությունը (Իշխանություն) (California High-Speed Rail Authority [Authority]) հայտարարում է **Վերջնական Միջավայրային ազդեցության տեղեկագրի/Միջավայրային ազդեցության հայտարարության(EIR/EIS) առկայությունը Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու նախագծի Burbank-ից Los Angeles նախագծային հատվածի** համար:

Burbank-ից Los Angeles նախագծային հատվածի Վերջնական EIR/EIS-ը և հարակից փաստաթղթերը հանրության տրամադրելի կլինեն նոյեմբերի 5, 2021 թվին: Վերջնական EIR/EIS-ը Իշխանության կայքում PDF ձևաչափով տրամադրելի է առցանց (www.hsr.ca.gov): Կարող եք նաև էլեկտրոնային պատճենը խնդրել զանգահարելով (877) 977-1660 համարով:

Իշխանության կայքը պարունակում է նաև նախկինում թողարկված Սևագիր EIR/EIS-ը (հրատարակված մայիսի 26, 2020 թվին, CEQA-ի և NEPA-ի ներքո): Գործադիր ամփոփումը տրամադրելի է անգլերեն, արաբերեն, հայերեն, չինարեն, ճապոներեն, կորեերեն, իսպաներեն, տագալերեն և վիետնամերեն լեզուներով:

Վերջնական EIR/EIS-ի տպագիր և/կամ էլեկտրոնային պատճենները տեղադրվել են հետևյալ գրադարանային վայրերում և դրանք հնարավոր է աչքի անցկացնել հաստատությունների աշխատանքային ժամերի ընթացքում (աշխատանքային օրերը/ժամերը կարող են կրճատվել՝ համապատասխանելու թագավարակի հանրային առողջապահության և անվտանգության հրահանգներին)՝

- Burbank
  - Buena Vista մասնաճյուղի գրադարան, 300 N Buena Vista Street
  - Northwest մասնաճյուղի գրադարան, 3323 W Victory Boulevard
  - Burbank-ի Կենտրոնական գրադարան, 110 N Glenoaks Boulevard

- Glendale
  - Grandview գրադարան, 1535 Fifth Street
  - Pacific Park և Համայնքային կենտրոն, 501 S Pacific Avenue
  - Glendale-ի Կենդրոնական գրադարան, 222 E Harvard Street
- Los Angeles
  - Atwater Village մասնաճյուղի գրադարան, 3379 Glendale Boulevard
  - Chinatown մասնաճյուղի գրադարան, 639 N Hill Street
  - Cypress Park մասնաճյուղի գրադարան, 1150 Cypress Avenue
  - Lincoln Heights մասնաճյուղի գրադարան, 2530 Workman Street
  - Little Tokyo մասնաճյուղի գրադարան, 203 S Los Angeles Street

Վերջնական EIR/EIS-ի տպագիր և/կամ էլեկտրոնային պատճենները և հարակից տեխնիկական տեղեկագրերի էլեկտրոնային պատճենները վերանայման համար առկա կլինեն աշխատանքային ժամերի ընթացքում Իշխանության կենտրոնատեղիում՝ 770 L Street, Suite 620 MS-1, Sacramento, CA հասցեով և ժամադրությամբ, Հարավային Կալիֆորնիայի տարածաշրջանային գրասենյակում՝ Southern California Regional Office at 355 S Grand Avenue, Suite 2050, Los Angeles, CA հասցեով: Փաստաթղթերը տեսնելու համար ժամադրություն դասավորելու նպատակով խնդրում ենք զանգահարել 323-610-2819 համարով:

Վերջնական EIR/EIS-ը հանրության և հանրային գործակալություններին տրամադրելի է դարձվում Կալիֆորնիայի միջավայրային որակի օրենքի (California Environmental Quality Act, CEQA) և Ազգային միջավայրային քաղաքականության օրենքի (National Environmental Policy Act, NEPA) համաձայն՝ նախքան Իշխանության որոշումներ արձակելը այս նախագծային մակարդակով միջավայրային վերանայման ավարտին:

Այս նախագծի համար NEPA-ի և կիրառելի դաշնային միջավայրային օրենքներով պահանջվող միջավայրային վերանայումը, խորհրդակցությունը և այլ գործողություններ իրականացվում են կամ իրականացվել են Կալիֆորնիա նահանգի կողմից՝ Միացյալ Նահանգների 23 օրենսգրքի հոդված 327-ի և հուլիսի 23, 2019 թվակիր Հասկացողության հուշագրի (MOU) համաձայն, և գործադրվել են Երկաթուղու դաշնային վարչության (Federal Railroad Administration, FRA) և Կալիֆորնիա նահանգի կողմից: MOU-ի ներքո, Իշխանությունը նախագծի դաշնային գլխավոր գործակալությունն է NEPA-ի ներքո: Հուլիսի 23, 2019 թվի MOU-ից առաջ, FRA-ն էր գլխավոր դաշնային գործակալությունը: Իշխանությունը գլխավոր գործակալությունն է նաև CEQA-ի ներքո:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ 2022 թվի հունվարի 19-ին և հունվարի 20-ին, առավոտյան 11:00-ին:

COVID-19-Ի ԹԱՐՄԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Թագավարակին վերաբերող հանրային առողջապահության և ապահովության պահանջմունքների պատճառով, Վերջնական EIR/EIS-ի համար Իշխանության տնօրենների խորհրդի հանդիպումը կարող է կայանալ որպես միայն առցանց/հեռախորհրդաժողով: Խնդրվում է ստուգել Իշխանության կայքը (www.hsr.ca.gov) կամ զանգահարել (916) 324-1541 համարով հավելյալ տեղեկության համար, ներառյալ՝ ծրագրված հանդիպումների մասին թարմագույն տեղեկությունները:

Իշխանության տնօրենների ժողովը կանցկացնի երկօրյա հանդիպում **2022 թվի հունվարի 19-ին և հունվարի 20-ին**, նկատի առնելու համար արդյո՞ք վավերացնել Վերջնական EIR/EIS-ը և հաստատել Նախընտրելի այլընտրանքը (Preferred Alternative)՝ (HSR կառուցային այլընտրանքը, Burbank կայարանը ներառած) CEQA-ի համաձայն: Իշխանության տնօրենների խորհուրդը՝ NEPA-ի գլխավոր գործակալության դերով, նույնպես նկատի կառնի արդյո՞ք Իշխանության գլխավոր գործադիր տնօրենին թելադրել թողարկել Որոշման արձանագրություն՝ Burbank-ից Los Angeles նախագծային հատվածի համար, ընտրելով Նախընտրելի այլընտրանքը (HSR կառուցային այլընտրանքը, Burbank կայարանը ներառած) Իշխանության որպես NEPA-ի գլխավոր գործակալություն: Իշխանության տնօրենների խորհրդի առաջադրված գործողություններին աջակցող փաստաթղթերն ու նյութերը տրամադրելի կլինեն հանդիպումից առաջ Խորհրդի կայքում՝ https://hsr.ca.gov/about/board-of-directors/schedule/:

Հանդիպման շենքերը մատչելի են հաշմանդամ անձանց կամ նրանց, ովքեր օգնության կարիք ունեն մասնակցելու համար: Թարգմանական ծառայությունների կամ հատուկ կարիքների համար խնդրում ենք զանգահարել (877) 977-1660 համարով:

Հարցեր ունենալու կամ փաստաթղթերի պատճենները գտնելու համար օգնության կարիքի դեպքում խնդրվում է էլ. փոստ ուղարկել մեզ Burbank_Los.Angeles@hsr.ca.gov հասցեով կամ զանգահարել Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու իշխանության գրասենյակ (877) 977-1660 համարով: